Կ-1182-03.11.2025,15.01.2026-ԳԿ-011

Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «իբ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «իբ) սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված համակարգ, որը ստեղծված է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության և տվյալների պահպանման նպատակով: Այն ապահովում է տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը «ժ.9» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.10», «ժ.11» և «ժ.12» կետերով.

«ժ.10) վարում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը.

ժ.11) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

ժ.12) մշակում, ներդնում և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները.»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-1182-03.11.2025,15.01.2026-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի ~~եւ~~ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «լիբ» կետով՝ ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ. «լիբ) սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված համակարգ, որը ստեղծված է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության ~~եւ~~ և տվյալների պահպանման նպատակով: Այն ապահովում է տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը «ժ.9» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.10~~» եւ»~~, «ժ.11» և «ժ.12» կետերով~~՝ հետեւյալ բովանդակությամբ~~.

«ժ.10) վարում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը.

ժ.11) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

ժ.~~11~~12) մշակում, ներդնում ~~եւ~~ և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները.»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. ~~***Հոդված 3.*** Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ. «Սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման եւ վարման լիազոր մարմին է սահմանվում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազոր մարմինը:»:~~

~~***Հոդված 4.***~~ Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:

~~***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1182-03.11.2025-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***Կառավարություն***	1-ին հոդված	1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող «լ» կետը համարակալել որպես «իբ» կետ՝ որպես հերթական համարակալում, 2. «որը ստեղծված է» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝» բառերով, քանի որ անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմնի կողմից է ստեղծվում նշված համակարգը, փոփոխության արդյունքում նախագծի 3-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածը հանվել է:		
2.	***Կառավարություն***	2-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր «ժ.10» կետով և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը «ժ.9» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.10», «ժ.11» և «ժ.12» կետերով. «ժ.10) վարում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը. ժ.11) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը. ժ.12) մշակում, ներդնում և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները.», քանի որ անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմինն է մշակում և ներդնում վարչական ռեգիստրները» Լրացվող կետերի համարակալումը վերանայվել է:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	***Կառավարություն***	3-րդ հոդված	3-րդ հոդվածը նախագծից առաջարկում ենք հանել, քանի որ տվյալ դրույթի բովանդակությունը ներառվել է նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	***Կառավարություն***	4-րդ և 5-րդ հոդվածներ	Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածները առաջարկում ենք միավորել, համարակալելով որպես 3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 3.** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:»:	Ընդունվել է	Ընդունվել է